*Հաստատված է*
**<<ՇՄԳԸԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-1>>***ծածկագրով*
*ընթացակարգի հանձնաժողովի*
2014 թ. << հունվար >> <<08>>-ի թիվ <<1 >> որոշմամբ

***«Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» ՓԲԸ***

# ՀՐԱՎԵՐ

«Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն»ՓԲԸ -ի կարիքների համար՝

<<Դեղորայք և պատվաստանյութեր>> -ի ձեռքբերման նպատակով հայտարարված ՇՀ ընթացակարգի

**« ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով**

**գնման ընթացակարգով շրջանակային**

**համաձայնագրեր կնքած մասնակիցներին**

Հարգելի Մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4>> ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում **«Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն»ՓԲԸ**-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նշված՝ Դեղորայք և պատվաստանյութեր, կից ներկայացվող պայմանագրի նախագծի N1 հավելվածում նշված ապրանքները: Ապրանքների մատակարարման պայմանները ներկայացված են պայմանագրի նախագծում:

Հայտնում ենք, որ գնման առարկաների վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկները անհրաժեշտ է ներկայացնել **«Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն»ՓԲԸ**, քաղաք Գյումրի, Սարուխանյան 1 հասցեով, 1-ին վարչական մասնաշենք, գնումների համակարգող Թ.Գաբրիելյանին մինչև **2014թ. հունվարի 21-ը, ժամը 11:30-ը/հայտերի ներկայացման վերջնաժամկետ/**:

Հայտերը պարունակող ծրարները կբացվեն **«Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն»ՓԲԸ** , քաղաք Գյումրի, Սարուխանյան 1 հասցեով, 1-ին մասնաշենք, գնումների համակարգող Թ.Գաբրիելյանին մինչև **2014թ. հունվարի 21-ը, ժամը 11:30-ը /հայտերի ներկայացման վերջնաժամկետ/**:
Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը:
Պարտադիր է Հայտը ներկայացնող անձի անձնագրի ինչպես նաև, հայտ ներկայացնող անձի տվյալ կազմակերպության տնօրեն չհանդիսանալու դեպքում, կազմակերպության տնօրենի կողմից տրված լիազորագրի առկայությունը:

Շրջանակային համաձայնագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ապա հաղթողին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում՝ առաջարկված գների նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարար գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ:

Գնային առաջարկը ներառում է գինը, որը ներկայացվում է ապրանքի միավորի գնով և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը: Գնային առաջարկը և դիմումն անհրաժեշտ է ներկայացնել **<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/4>>** գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:
Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրեն Ա.Ասատրյան

Հեռ. 0312 5-65-17

**Նախագիծ**

**<< ԳՅՈՒՄՐՈՒ Վ.ԱԲԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>**
**ՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N <<ՇՄԳԸԲԿ-ՇՀԱՊՁԲ -11/4-1>>**

ք. Գյումրի << >> հունվար2014թ.

<<Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արտուշ Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<__________________>> -ն, ի դեմս տնօրեն ________________________յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված Դեղորայք ւ պատվաստանյութեր /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝

ա/ ք.Գյումրի, Սարուխանյան1 հասցեով

բ/ 30% և 50% զեղչով ինչպես նաև հոգեմեդ դեղորայքի տրամադրումը հիվանդներին ապահովելու համար դեղատունը պետք է գտնվի՝ ք.Գյումրի, Սարուխանյան 1 հասցեից 100մ-ից ոչ հեռու, ունենա հոգեմեդ դեղորայքի վաճառքի համար լիցենզիա, դեղորայքի պահպանման և պատրաստման համար անհրաժեշտ պայմաններ, որակյալ աշխատակազմ: Ապրանքը տրվում է Գնորդի կողմից հաստատված դեղատոմսերի հիման վրա/Ստացողին/:Դեղատոմսերը Գնորդի կողմից տրվում է 2 օրինակ, որի երկրորդ օրինակը/ները/ մնում է <<Վաճառող>>-ի մոտ , իսկ առաջին օրինակը/ները/ տվյալ ամսվա վերջում Հաշիվ-Ապրանքագրի հետ տրվում է <<Գնորդին>>:

գ/Սոց. անապահով խմբում ընդգրկված բնակչությանը անվճար տրվող դեղորայքի և պոլիկլինիկայի կաբինետներում հիվանդների բուժման համար օգտագործվող դեղորայքի ընկերության պատվերի առաքում, պատվերը ընդունելուց մինչև երկու աշխատանքային օրվա ընթացքում: Գնման առաջարկում ներկայացված գինը պետք է ներառի բեռնափոխադրման, բեռնաթափման արժեքը, հարկերը, ապահովագրությունը և հնարավոր այլ ծախսերը: Դեղորայքը պետք է ունենա առնվազն 2 տարի պահպանման ժամկետ:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 աշխատանքային օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 աշխատանքային օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ

այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ ________________ (____________________________________________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.1.1* Պայմանագրով կանխավճար չի

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

**5. Ապրանքի որակը**

5.1Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 .օրինակ /Հավելված N 4/:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

**9. Այլ պայմաններ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի միջև սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Այն դեպքում, երբ ապրանքի մատակարարման համար տվյալ տարվան հաջորդող տարում ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում, ապա պայմանագիրը լուծվում է:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ ե սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և տվյալներ/, կամ Վաճառողին հաղթող ճանաչելու / ընտրելու/ մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որ չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով: Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:: Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

**9.8 Պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝______ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան Պայմանագրի գինն է՝ Ապրանքի մատակարարման մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ապրանքի մատակարարման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով Պայմանագիրը կլուծվի:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

*<u>**Սույն կետը կարող է նախատեսվել պայմանագրի նախագծով, եթե կիրառելի է:</u>*

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| | |
|---|---|
| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| **<<Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն>>ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա.Ասատրյան** | _______________________________ /ստորագրություն/ Կ.Տ |

--------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 4

«------» --------------------2014թ. կնքված

N ՇՄԳԸԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-1 պայմանագրի հավելված

Կատարող

Գտնվելու վայր

Հ/Հ

ՀՎՀՀ

Պատվիրատու

«Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» ՓԲԸ

ք.Գյումրի , Սարուխանյան1

<Հայէկոնոմբանկ> ՓԲԸ

Հ/Հ 163128117617

ՀՎՀՀ 05500891

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«------» --------------------- 2014թ.

Պայմանագրի անվանումը՝ Դեղորայքի ձեռքբերման:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «------» ------------------- 2014թ

Պայմանագրի համարը՝ ՇՄԳԸԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-1

Պատվիրատուն, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի և Կատարողը՝ ի դեմս ---------------------------------------------------------,

հիմք ընդունելով որ պայմանագրով նախատեսված՝ստորև նշված Ապրանքների մատակարարումները,
աշխատանքները և ծառայությունները համապատասխանում են պայմանագրով ամրագրված
տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը
հետևյալի մասին.

Պայմանագրի) շրջանակներում Կատարողը «------» ------------------ 2014թ.-ից «------» -------------------- 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը | Վճարման ժամկետը (ըստ |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | (հազար դրամ) | ժամանակացույցի) |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են
սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
<<>>

_______________________
Ստորագրություն

__________________________
Անուն. Ազգանուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____________________
ստորագրություն

_______________________
Անուն. Ազգանուն
Կ.Տ.

*<<ՇՄԳԼԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-1>> ծածկագրով ընթացակարգի հրավերի*

ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈւԹՅՈւՆ N *<<ՇՄԳԼԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-1>>*

ք. Գյումրի <<_____>> _____________2014 թ.

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

## *1. Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<«Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն»ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ << *Դեղորայք և պարփվասպանյութեր>>-ի* ձեռքբերման *<<ՇՄԳԼԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-1>>* ծածկագրով շրջանակային ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված << *Դեղորայք և պարփվասպանյութեր>>-ի* ձեռքբերման *<<ՇՄԳԼԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-1>>* գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ------------------թվերով------------------ (-------------------------տառերով-------------------------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>> -ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում << >> ՓԲԸ-ն առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

## *2. Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20 թ.______________-ի -ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<<Մասնակցի անվանումը>>

<<Մասնակցի հասցեն>>

<<Մասնակցի բանկի անվանումը>>

Հ/Հ

ՀՎՀՀ

տնօրեն՝ ------------------------------

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ---------------------------

(ստորագրություն)

Կ.Տ

«ՇՄԳԼԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-1»_ ծածկագրով
մրցույթի հրավերի

«ՇՄԳԼԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-1»_ ծածկագրով
մրցույթի հանձնաժողովին

## Գ Ն Մ Ա Ն Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ Ի Ն Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ե Լ Ո Ւ

## Դ Ի Մ Ո Ւ Մ

_______________________________________________-ն հայտնում է , որ ցանկություն ունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը/անունը/

մասնակցելու «Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից « ՇՄԳԼԲԿ - ՇՀԱՊՁԲ -11/4 – 1 » ծածկագրով հայտարարված ընթացակարգի գնի առաջարկի չափաբաժիններին և հայտի /ծանուցման/ պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____________________________________________________ -ն հայտնում է և հավաստում է, որ իր
հիմնադրի Ընթացակարգի մասնակցի անվանումը/անունը/

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է , բացառությամբ՝

1. Պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների :

2. Համատեղ գործունեության կարգով /կոնսորցիումով/ մասնակցության դեպքերի:

_________________________________________________ - ն հայտնում և հավաստում է , որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը

գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

___________________________ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է-- - ----------------

Ընթացակարգի մասնակցի անվանումը ____________________________________________
_______________

Մասնակցի անվանումը /անունը/ղեկավարի պաշտոնը,Անուն Ազգանուն/ /ստորագրություն/

<<_____>>_______________2014թ . Կ տ.

«ՇՄԳԼԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-1»_ ծածկագրով
մրցույթի հրավերի

«ՇՄԳԼԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-1»_ ծածկագրով
մրցույթի հանձնաժողովին

# Գնի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՇՄԳԼԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-1»_ ծածկ ագրով պարբերական մրցույթի հրավերը_____________________________________________ն առաջարկում է

մրցույթի մասնակցի անվանումը(անունը)

________________________չափաբաժին(ներ)կատարել հետևյալ գներով.___

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | |
| … | … | | | |
| … | … | | | |

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:**

****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

------------------------------------------------------------_                                        _______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը)                              (ստորագրությունը)

_,..........................2014թ

( ամսաթիվը, ամիսը

հավելված 1
<< >> << >> 2014թ. կնքված
N <<ՇՄԳԸԲԿ-ՇՀԱՊՁԲ 11/4-1>>> *ծածկագրով գնման պայմանագրի*
<< ԴԵՂՈՐԱՅՔ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐ>> -Ի ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

# Տեխնիկական բնութագիր

| Հ/Հ | Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման | Ապրանքի անվանումը /չպատենտավորված՝ գեներիկ անվանումը/ | Չափման միավորը /դեղահատ, օշարակ, սրվակ և այլն | Ապրանքի տեխնիկական և այլ բնութագրիչ տվյալները |
|---|---|---|---|---|
| 1 | 33661230 | ացետիլսալիցիլաթթու N02BA01 100մգ | դեղահատ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղահատ,բլիստեր 2 հատ 1 տուփի մեջ,1 հաբի դոզան 100մգ : Անվտանգությունը - Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն՝ 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը : Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |
| 2 | 33632130 | դիկլոֆենակ M01AB05 25 մգ | դեղահատ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղահատ,բլիստեր 2 հատ 1 տուփի մեջ, 1 հատ դոզան 25մգ : Անվտանգությունը - Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը: Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |
| 3 | 33632120 | կետոպրոֆենM02AA10 200մգ | դեղահատ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղահատ,բլիստեր 2 հատ 1 տուփի մեջ, 1 հատ դոզան 200մգ : Անվտանգությունը - Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը: Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |
| 4 | 33661240 | պարացետամոլ N02BE01 100մգ | մոմիկ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - մոմիկներ, պլաստմասեպատ տուփի մեջ , N10 հատ 1 տուփի մեջ, 1 հատի դոզան 100մգ: Անվտանգությունը - Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը: Պայմանական նշանները - «պահել սառը տեղում»: |
| 5 | 33632110 | իբուպրոֆեն M01AE01 400մգ | դեղահատ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղահատ,պլաստմասե ֆլակոնի մեջ N 30 հատ, 1 հատի դոզան 400մգ: Անվտանգությունը - Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը: Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | 33632110 | իբուպրոֆեն M01AE01 200մգ/5մլ | օշարակ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - ֆլակոն, դոզան 200մգ/5մլ: Անվտանգությունը - Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը: Պայմանական նշանները - «կոտրվող է»: |
| 7 | 33642230 | պրեդնիզոլոն AO2AB06 5 մգ | դեղահատ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղահատ ,պլաստմասե ֆլակոն N30 հատով, 1 հատի դոզան 5մգ : Անվտանգությունը - Համաձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը:Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |
| 8 | 33661340 | ֆենոբարբիտալ N03AA02 100մգ | դեղահատ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղահատ , N48հատով, 1 հատի դոզան 100մգ : Անվտանգությունը - Համաձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը:Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |
| 9 | 33691210 | ալբենդազոլ PO2CA03 400մգ | դեղահատ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղահատ,պլաստմասե ֆլակոն N 30հատ, 1 հատի դոզան 400մգ: Անվտանգությունը - Համաձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն` 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը :Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |
| 10 | 33691230 | մեբենդազոլ PO2CA01 500մգ | դեղահատ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղահատ,պլաստմասե ֆլակոն N100հատ, 1 հատի դոզան 500մգ: Անվտանգությունը - Համաձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն` 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը : Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |
| 11 | 33651102 | ամոքսացիլին J01CA04 250 մգ/5մլ | օշարակ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - շշիկ: Մոշի կամ ելակի համով, չափագդալով , դոզան 250մգ/5մլ : Անվտանգությունը - Համաձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն` 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը : Պայմանական նշանները - «կոտրվող է»: |
| 12 | 33651103 | ամոքսացիլին+քլավուլանաթթու J01CR02 125+31.25/5մլ | օշարակ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղահատ, 14 հատ 1 տուփի մեջ1 հատի դոզան 125+31.25/5մլ: Անվտանգությունը - Համաձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն` 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը : Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | 33651103 | ամոքսացիլին+քլավուլանաթթու J01CR02 250+62.5/5մլ | օշարակ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղահատ,14 հատ 1 տուփի մեջ,1 հատի դոզան 250+62.5/5մլ: Անվտանգությունը - Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն՝ 01.03.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը : Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |
| 14 | 33651402 | ացիկլոֆիր J05AB01 200մգ | դեղահատ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - կապույտ գույնի դեղահատ, 2 բլիստեր 1 տուփի մեջ ,1 հատի դոզան 200մգ : Անվտանգությունը - Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն՝ 01.02.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը :Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |
| 15 | 33621330 | ֆոլաթթու B03BB01 1 մգ | դեղահատ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղին գույնի, դեղահատ, պլաստմասե տուփի մեջ N 50, 1 դեղահատի դոզան 1մգ : Անվտանգությունը - Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն՝ 01.02.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը :Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |
| 16 | 33621330 | ֆոլաթթու B03BB01 5 մգ | դեղահատ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղին գույնի, դեղահատ, պլաստմասե տուփի մեջ N 48 հատ,1 հատի դոզան 5մգ : Անվտանգությունը - Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն՝ 01.02.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը :Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |
| 17 | 33621340 | ցիանակոբալամին B03BA01 500մկգ /մլ | սրվակ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - սրվակ,թղթյա տուփի մեջ, 1 հատի դոզան 500մկգ/մլ: Անվտանգությունը - Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն՝ 01.02.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը : Պայմանական նշանները - «կոտրվող է»: |
| 18 | 33622620 | կարվեդիլոլ C07AG02 6.25մգ | դեղահատ | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղահատ ,2 բլիստեր 1 տուփի մեջ,1 հատի դոզան 6.25մգ: Անվտանգությունը - Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն՝ 01.02.2015թ: Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը :Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: |
